2011 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2011 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 114.4 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 109.5 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 62.9%-ով և 52.4%-ով ապահովել են ՀՀ կառավարության առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշների կատարումը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 13.9%-ով, ծախսերի գծով՝ 11.9%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 10.9%-ով կամ 11.2 մլրդ դրամով, որն ապահովվել է հարկերի, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների 11.7% (11.4 մլրդ դրամ) աճով: Հաշվետու ժամանակահատվածում այլ եկամուտները նվազել են 2.2%-ով (136 մլն դրամով), իսկ արտաքին աղբյուրներից պաշտոնական դրամաշնորհներ չեն ստացվել:

Պետական բյուջեի եկամուտների 94.6%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5.4%-ը՝ այլ եկամուտների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 2.2 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակում ծրագրված մուտքերի 87.5%-ը:

2011 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 89.1 մլրդ դրամ հարկային եկամուտներ ու պետական տուրքեր, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի 63.9%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 10.8%-ով կամ շուրջ 8.7 մլրդ դրամով: Հարկային եկամուտների աճի վրա զգալի ազդեցություն է գործել ավելացված արժեքի հարկի,

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

ռոյալթիի, եկամտահարկի, ինչպես նաև ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների գծով մուտքերի աճը:

Հարկերի և տուրքերի 49.1%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 43.8 մլրդ դրամ և 8.8%-ով կամ 3.6 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 24.2 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, շուրջ 19.6 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից:

Պետական բյուջեի հունվար-փետրվար ամիսների հարկային եկամուտների ու պետական տուրքերի 7.9%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 7.1 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 3.3 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 3.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 4.7%-ով կամ 318.2 մլն դրամով, ինչը պայմանավորված է հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված ակցիզային հարկի շուրջ կրկնակի աճով: Ներմուծման գծով ստացված մուտքերը նույն ժամանակահատվածում գրանցել են անկում:

2011 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 12.6%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 11.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 1.5%-ով կամ 168 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 11.5 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 7.8%-ով կամ 831.1 մլն դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են 3.8 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 4.3%-ը ՝ ընդամենը 1%-ով զիջելով 2010 թվականի համապատասխան ցուցանիշը:

2011 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 2.7 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով եռամսյակային ծրագրի 61.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 34.6%-ով կամ 690.9 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող տուրքերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են 3.5 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.9%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2.9%-ով կամ 103.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր դաշտ անցնելու հանգամանքով:

2011 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1.8 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 57.6%-ով կամ 648.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող բնօգտագործման վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 3.8 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 1.4 մլրդ դրամ են կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 995.8 մլն դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 390 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման թույլտվության համար սակագնային քվոտայի վճարը, 369.2 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 162.5 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 106.6 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 192.1 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 8.6 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 118 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 3.3 անգամ կամ 2.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների աճով: Նշենք, որ ռոյալթիի գծով մուտքերը հունվար-փետրվար ամիսների ընթացքում կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում փաստացի մուտքագրված և ընթացիկ տարվա առաջին եռամսյակում նախատեսված համապատասխանաբար 30.8 մլն և 1 մլրդ դրամի դիմաց: Նշված բարձր ցուցանիշը պայմանավորված է այն հանգամանքով, որ ընթացիկ տարում

գումարներ են մուտքագրվել նախորդ տարվա պարտավորությունների մարման նպատակով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 19.1 մլրդ դրամ՝ 66.7%-ով ապահովելով եռամսյակային ծրագիրը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 16.5%-ով կամ 2.7 մլրդ դրամով:

2011 թվականի հունվար-փետրվարին պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 6.2 մլրդ դրամ և 90.4%-ով ապահովել եռամսյակային ծրագրի կատարումը: Նշված համեմատաբար բարձր ցուցանիշն ապահովվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի և ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների հաշվին, որոնք կազմել են համապատասխանաբար 539.6 մլն դրամ և 418.9 մլն դրամ՝ 60.1 և 73.4 տոկոսով գերազանցելով առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշները: Այլ եկամուտների գծով մուտքերից 2.1 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց եռամսյակային ծրագիրը կատարվել է 82.9%-ով: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 2.2%-ով:

2011 թվականի հունվար-փետրվարին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 109.5 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով եռամսյակային ծրագրի 52.4%-ը: Մասնավորապես՝ 102.3 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 7.1 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 1.1 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին՝ կազմելով ծրագրվածի 40%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 3.1%-ով կամ 3.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է այլ ծախսերի, կենսաթոշակների և պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 102.3 մլրդ դրամ՝ 53.4%-ով կատարելով եռամսյակային ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 3.6%-ով կամ 3.6 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 9.5 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը,

570.7 մլն դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի համապատասխանաբար 58.9%-ը և 50.4%-ը: Նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 10%-ով և 6.6%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 16.3 մլրդ դրամ, որը 10.7%-ով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 5.3 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը: Մասնավորապես՝ նշված գումարից 4.1 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 1.3 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2011 թվականի հունվար-փետրվար ամիսներին պետական պարտքի սպասարկման ծախսերը 8.9%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը տեղի է ունեցել հիմնականում արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճի հաշվին:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 2.4 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 57.8%-ը և 3.5%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Շուրջ 10.4 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 10.1 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 259.1 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 5.4 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք պահպանվել են նախորդ տարվա մակարդակին: Դրամաշնորհների եռամսյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 44.6%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.8%-ով:

Հունվար-փետրվար ամիսների պետական բյուջեի ծախսերի 35.3%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 38.6 մլրդ դրամ՝ 56.9%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը և 0.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես՝ նշված գումարից 31 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 7.6 մլրդ դրամ՝ նպաստները:

2011 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում պետական բյուջեի միջոցներից 19.2 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 12.8%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 7.1 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 41.7%-ը: Նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների համեմատ նշված ցուցանիշը նվազել է 3.8%-ով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների գծով ծախսերի նվազմամբ: Անցած ժամանակահատվածում 11.3 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ եռամսյակային ծրագրով նախատեսված 6.2 մլն դրամի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 14.7 մլն դրամի դիմաց:

2011 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 4.9 մլրդ դրամ հավելուրդով՝ առաջին եռամսյակում նախատեսված 26.9 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Հավելուրդը պայմանավորված է պետական բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների համեմատաբար բարձր կատարողականով, որի արդյունքում բյուջեի տարեսկզբի միջոցներից եռամսյակային ծրագրով նախատեսված 28.6 մլրդ դրամից օգտագործվել է 2.7 մլրդ դրամ: Անցած ժամանակահատվածում ներքին աղբյուրների գծով ֆինանսավորման ցուցանիշը կազմել է 2.8 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման գծով՝ -7.7 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 170.3 մլն դրամ են կազմել փոխառու միջոցներից, 2.7 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվներից մուտքերը: Մասնավորապես՝ 180.8 մլն դրամ ստացվել է գանձապետական պարտատոմսերի թողարկումից: Մուրհակների մարման նպատակով առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 94.3%-ով՝ կազմելով 10.4 մլն դրամ: 942.2 մլն դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 1 մլրդ դրամի վարկեր:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի արտաքին ֆինանսավորումը կազմել է -7.7 մլրդ դրամ, որից 1.4 մլրդ դրամը՝ փոխառու միջոցների, 6.4 մլրդ դրամը՝ ֆինանսական ակտիվների գծով: Նշված 1.4 մլրդ դրամն ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 608.8 մլն դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, շուրջ 572.2 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 207.6 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային

վարկերի մարմանը: 6.4 մլրդ դրամ տրամադրվել է ԼՂՀ-ին որպես միջպետական վարկ: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 49.1 մլն դրամի վճարում, որը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար ամսին: